ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1941—1945 ԹԹ.)

Պատմ. գիտ. դոկտոր Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1941 թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան, խախտելով ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև 1939 թ. օգոստոսի 23-ին 10 տարի ժամանակով կնքված չհարձակման պայմանագիրը, ուխտադրժորեն հարձակվեց Խորհրդային Միության վրա՝ նպատակ ունենալով ոչնչացնել այն, զավթել երկրի տարածքները, ստրկացնել նրա ժողովուրդներին և ստեղծել գերմանական ռասիստական մեծ կայսրություն։ Ֆաշիստական հորդաների դեմ ոտքի ելան Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները։

Հայ ժողովրդի ավելի քան կես միլիոն զավակներ տարբեր ռազմաճակատներում և բոլոր զորատեսակների կազմում մարտնչեցին ֆաշիստական զավթիչների դեմ։ Նրանցից շուրջ 200 000-ը զոհվեցին դաժան մարտերում։ Հերոսաբար կատարելով իրենց սրբազան պարտքը, հայ ռազմիկները ԽՍՀՄ մյուս բոլոր ժողովուրդների զավակների հետ մեկտեղ, ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ, արժանի ավանդ ներդրեցին առաջադեմ մարդկության ոխերիմ թշնամու՝ ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակի գործում։ Մարտերում իրենց անօրինակ սխրանքներով առավել աչքի ընկած հայ ժողովրդի և Հայաստանի 108 զավակներ (որոնցից 100-ը՝ հայեր) արժանացան Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման, երկու հոգի՝ Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը և դրոհային ավիացիոնի հրամանատար, գվարդիայի փոխգնդապետ, լեգենդար օդաչու Նելսոն Ստեփանյանը այդ բարձր կոչմանն արժանացան կրկնակի անգամ, 27 զինվորներ դարձան Փառքի երեք աստիճանների շքանշանների լրիվ ասպետներ[1], ավելի քան 60 հայորդու շնորհվեց գեներալի, 10 հոգու՝ ծովակալի կոչում։ Խորհրդային Միության մարշալի կոչում շնորհվեց Հովհաննես Բաղրամյանին, Խորհրդային Միության ծովակալի կոչում՝ Հովհաննես Իսակովին, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում՝ Համազասպ Բաբաջանյանին, ավիացիայի մարշալի կոչում՝ Արմենակ Խանփերյանցին (Սերգեյ Խուդյակով), ինժեներական զորքերի մարշալի կոչում՝ Սերգեյ Աղանյանին (Ագանով)[2]։ Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայրենիքին մատուցած ակնառու ծառայությունների համար 12 հայորդու շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչում։ Ընդհանուր առմամբ պատերազմի տարիներին մարտական շքանշաններով ու մեդալներով պարգևատրվեցին 66802 հայ[3]։

Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հայ ռազմիկների մի մասը ծառայեց տարբեր ռազմաճակատների բոլոր զորատեսակների կազմում։ Նրանք իրենց սխրանքներով աչքի ընկան սահմանապահ ուղեկալների, ռազ-

---

[1] Книга о героях. Ереван, 1985 с. 6.

[2] Военный энциклопедический словарь. М., 1984, с. 20; «Военно-исторический журнал», 1987, № 6, с. 84—86.

[3] «Красная звезда», 28 марта 1967.

մածովային և ռազմաօդային նավատորմերի, հետևակայինների, տանկիստների, հրետանավորների, սակրավորների, կապավորների և այլ զորատեսակների, պարտիզանական ջոկատների, Եվրոպայի երկրների դիմադրական շարժման մասնակիցների և դաշնակիցների բանակների շարքերում։

Սակայն հայ ռազմիկների մի զգալի մասը Հայրենական մեծ պատերազմին մասնակցեց կարմիր բանակի կազմում գոյություն ունեցած հայկական ազգային զորամիավորումների շարքերում։ Այդ զորամիավորումները ձևավորվեցին ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեի 1941 թ. նոյեմբերի 13-ի որոշման հիման վրա և նպատակ ունեին կարճ ժամանակամիջոցում համալրել կարմիր բանակը, որի անվերադարձ կորուստները միայն առաջին երեք ամիսների ընթացքում կազմեցին 2 087 301 մարդ։

Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում միայն Անդրկովկասի երեք հանրապետությունները ֆաշիստական զավթիչների դեմ մարտնչելու կամ պետական սահմանները պաշտպանելու նպատակով կազմավորեցին 17 ազգային դիվիզիա. դրանք են՝ Հայկական 89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ, ադրբեջանական 223-րդ, 396-րդ, 402-րդ և 416-րդ, վրացական 224-րդ, 242-րդ- 296-րդ, 349-րդ, 392-րդ, 394-րդ, 406-րդ և 414-րդ հրաձգային դիվիզիաները։ Եթե դրանց ավելացնենք նաև 1920-ական թթ. սկզբներին այդ հանրապետություններում կազմավորված Հայկական 76-րդ, Ադրբեջանական 77-րդ և Վրացական 47-րդ և 63-րդ լեռնահրաձգային դիվիզիաները, որոնք ավելի վաղ էին համալրվել տվյալ հանրապետությունների մարդկային և նյութական միջոցների հաշվին, ձեռք բերել իրենց նախկին ազգային տեսքը և մեկնել ռազմաճակատ, ապա դուրս է գալիս, որ միայն Անդրկովկասում կազմավորվեց 21 ազգային դիվիզիա։

Կարմիր բանակի հայկական առաջին ազգային դիվիզիան կազմավորվել է Երևանում 1922 թ. սեպտեմբերի 5-ին՝ Առանձին Կովկասյան բանակի ռազմական խորհրդի հրամանով, վերակազմավորման ենթարկված Հայկական կարմիր բանակի, ապա Հայկական հավաքական բրիգադի զորամասերի հիման վրա։ Մինչև 1930 թ. սկիզբը միավորումը պաշտոնապես կոչվում էր Հայկական հրաձգային դիվիզիա։ 1931 թ. նոյեմբերին այն վերակազմավորվեց լեռնահրաձգային դիվիզիայի, իսկ 1935 թ. դեկտեմբերի 2-ին կոչվեց Կ. Ե. Վորոշիլովի անունով, 1936 թ. մայիսի 29-ին դիվիզիան պարգևատրվեց Կարմիր որոշի շքանշանով, նույն ամսին նրան տրվեց 76-րդ համարը[4]։

Հայկական 76-րդ Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ լեռնահրաձգային դիվիզիան հատկապես մեծ դեր է խաղացել կարմիր բանակի համար ազգային զինվորական կադրեր պատրաստելու գործում։ Նրա շարքերում իրենց նախնական կոփվածությունն են ստացել հայազգի 2 մարշալ, 40-ից ավելի գեներալներ, 200-ից ավելի գնդապետներ, միջին և կրտսեր հրամանատարական կազմի մի քանի հազար սպաներ։ 1938 թ. մարտին դիվիզիան, կարմիր բանակի մյուս ազգային զորամիավորումների նման, վերակազմավորվեց և դառնալով համազորային միավորում՝ պահպանելով մարտական որոշը, հարը, տեղակայման վայրը և նյութական միջոցները։ Խիստ փոփոխություն կրեց անձնակազմը՝ դառնալով ինտերնացիոնալ։ Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, դիվիզիան համալրվեց ՀԽՍՀ մարդկային և նյութական միջոցներով և կրկին ձեռք բերեց նախկին ազգային տեսքը։ Նրա անձնակազմի 2/3-ից ավելին կազմեցին հայերը[5]։

1941 թ. օգոստոսի 25-ին Անդրկովկասյան ռազմաճակատի միավորումներից կազմված զորախմբի առաջապահում, Խորհրդային Միության և Իրա-

---

4 Հայկական 76-րդ Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ—51-րդ գվարդիական վիտեբսկյան Լենինի շքանշանակիր հրաձգային դիվիզիա, 1920—1945 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու. Երևան, 1976, էջ 8։

5 Ռուսաստանի դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՌԴ ՊՆԿԱ), ֆ. 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի, ց. 1, դ. 2, թ. 1։

նի միջև 1921 թ. կնքված պայմանագրի համաձայն, դիվիզիայի զորամասերը Ջուլֆայի մոտ անցան սահմանային Արաքս գետի աջ ափը և առաջ շարժվելով մինչև օգոստոսի 30-ը, առանց դիմադրության հասան Թավրիզ։ Խորհրդային զորքերի մուտքն Իրան հնարավորություն տվեց կարճ ժամանակամիջոցում այդ երկիրը մաքրել գերմանաֆաշիստական գործակալներից ու ձախողել Իրանը Խորհրդային Միության դեմ պատերազմի մեջ ներքաշելու հիտլերյան պլանները։

Դիվիզիան Թավրիզում երկար չմնաց։ Ռազմաճակատում ստեղծված ծանր կացությունը պահանջում էր մարտունակ նոր ուժեր։ Սեպտեմբերի սկզբներին այն վերադառնում է Իրանից և ուղարկվում գործող բանակ։ Սեպտեմբերի 27-ին Հարավ-արևմտյան ռազմաճակատի 38-րդ բանակի կազմում Ուկրաինական ԽՍՀ Պոլտավայի մարզի Զուտովոյի շրջանի Կոչուբեևկա, Կանտեմիրովկա, Ֆյոդորովկա տեղամասում դիվիզիան մարտերի մեջ է մտնում գերմանաֆաշիստական զավթիչների դեմ։ Մինչև 1941 թ. վերջը նրա զորամասերը պաշտպանական ծանր մարտեր էին մղում Զուտովո—Վալկի—Խարկով—Վոլչանսկ ուղղությամբ։ 1942 թ. ապրիլին 76-րդ հրաձգային[6] դիվիզիան Հարավ-արևմտյան ռազմաճակատի 21-րդ բանակի կազմում մասնակցում է ձմեռային, գարնանային մարտերին, իսկ մայիսի 11-ից՝ Խարկովի հարձակողական գործողությանը։ Ամռան սկզբներին հակառակորդի խոշոր բանակային խմբավորումների առաջխաղացումը խորհրդային զորքերին հարկադրեց ժամանակավորապես նահանջել դեպի արևելք։ Այդ շրջանում դիվիզիայի զորամասերը վերջապահ ծանր մարտերով ապահովում էին 21-րդ բանակի նահանջը։ Հաջողությամբ կատարելով հրամանատարության առաջադրանքը, հուլիսի սկզբներին նրանք անցնում են Դոն գետի ձախ ափը և համալրվելուց հետո, հուլիսի վերջերից մասնակցում Ստալինգրադյան ճակատամարտին, որն սկսվել էր 1942 թ. հուլիսի 17-ից և ավարտվեց 1943 թ. փետրվարի 2-ին։ Երկարատև ու համառ մարտերից հետո 1942 թ. հոկտեմբերի 24-ին դիվիզիայի զորամասերը գրավում են Դոն գետի աջ ափին գտնվող Կլետսկայա երկաթուղային հանգույցը և հենակետ ստեղծում այնտեղ։ Հակառակորդի բոլոր ջանքերը՝ ետ խլելու Կլետսկայան, հանդիպելով դիվիզիայի անձնակազմի հերոսական դիմադրությանը, վերջանում են անհաջողությամբ։ Ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այդ հենակետը պահպանվում է և ամրապնդվում։ Այն մեծ դեր է խաղում խորհրդային զորքերի 1942 թ. նոյեմբերի 19-ի նշանավոր հարձակման ժամանակ։ Ինչպես հայտնի է, այդ հարձակումն ավարտվեց հաջողությամբ և նոյեմբերի 23-ին Կալաչ քաղաքից հարավ-արևմուտք ընկած շրջանում Հարավ-արևմտյան և Ստալինգրադյան ռազմաճակատների զորքերը շրջապատման օղակի մեջ վերցրեցին գերմանական 330-հազարանոց խմբավորումը։ Այդ գործում իր արժանի ավանդը ներդրեց նաև 76-րդ հրաձգային դիվիզիան, որը ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի 1942 թ. նոյեմբերի 23-ի № 375 հրամանով արժանացավ գվարդիականի կոչման և այնուհետև կոչվեց 51-րդ գվարդիական Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ հրաձգային դիվիզիա[7]։

Նոյեմբերի վերջերին և դեկտեմբեր ամսվա ընթացքում գվարդիականները ոչ միայն հաջողությամբ ետ էին մղում շրջապատման օղակը ճեղքել ձգտող հակառակորդի բազմաթիվ գրոհները, այլև օրեցօր էլ ավելի ամուր էին սեղմում այն։ Ստալինգրադյան ճակատամարտում ֆաշիստական բանակների հզոր խմբավորման շրջապատմանն ու ոչնչացմանը ակտիվորեն մասնակցելու համար 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիան 1943 թ. հունիսի 19-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվեց Լենինի շքանշանով[8]։ Դիվիզիան այնուհետև Վորոնեժյան

6 Դիվիզիան կրկին հրաձգային էր դարձել 1941 թ. դեկտեմբերի 9-ին։

7 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 2, թ. 15։

8 Նույն տեղում, թ. 28 (այժմ Վոլգոգրադ քաղաքի փողոցներից մեկը կոչվում է 51-րդ գվարդիական դիվիզիայի անվամբ)։

ռազմաճակատի 6-րդ գվարդիական բանակի 23-րդ գվարդիական հրաձգային կորպուսի կազմում ակտիվորեն մասնակցում է Կուրսկի ճակատամարտին։ Գվարդիականները հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 23-ը դաժան մարտեր են մղում Օրյոլ—Կուրսկ—Բելգորոդ աղեղի հարավային մասում և հակառակորդին հասցնում կենդանի ուժի և տեխնիկայի մեծ վնասներ։ Կուրսկի ճակատամարտի հաղթական ավարտից հետո դիվիզիան 6-րդ գվարդիական բանակի կազմում, բնակլիմայական դժվարին պայմաններում, պայքարում էր Կալինինի մարզի Նևել, Նովոսոկոլնիկի, Պուստոշինսկի, Իդրիցայի և Սուտոկինսկի շրջանների ազատագրման համար։

1944 թ. հունիսի 23-ից մինչև հուլիսի 4-ը գվարդիականները հարձակողական մարտեր էին մղում Բելոռուսիայի հյուսիսային շրջաններում։ Նրանք հաղթահարեցին ջրային չորս արգելք, անցան 250 կմ, ազատագրեցին ավելի քան 200 բնակավայր, այդ թվում Պոլոցկ քաղաքը։ Դիվիզիան հատկապես աչքի ընկավ Արևմտյան Դվինան գետանցելիս, որի համար 15 մարտիկների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում։ Նրանց թվում էր նաև գվարդիայի եֆրեյտոր Արամայիս Ասատուրի Սարկիսովը։ Գորիսի շրջանի Տեղ գյուղի անվեհեր քաջորդին իր կյանքի գնով փրկեց ռուս հրամանատարի կյանքը և նպաստեց մարտական առաջադրանքի կատարմանը[9]։

Վիտեբսկի մարզում հակառակորդի խոշոր խմբավորման շրջապատման և ջախջախման մարտերին ակտիվ մասնակցություն ունենալու համար դիվիզիային շնորհվեցին Վիտեբսկյան, իսկ նրա գնդերին՝ Պոլոցկյան պատվավոր անունները։ Այնուհետև գվարդիականները մասնակցեցին ֆաշիստական զավթիչներից Լատվիայի ու Լիտվայի ազատագրմանը և իրենց մարտական ուղին ավարտեցին Կուռլանդական թերակղզում՝ հակառակորդի շրջապատված զորախմբի ջախջախումով, Բալթիկայի ափերին։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին դիվիզիայի հրամանատարությունը շարունակ պահպանում էր իր ավանդական կապերը Խորհրդային Հայաստանի աշխատավորության հետ։ Նրա պատվիրակությունները 5 անգամ այցելեցին Հայաստան և հանդիպումներ ունեցան հանրապետության բանվորների, կոլտնտեսականների, գիտության, մշակույթի և արվեստի ականավոր գործիչների հետ։ Հայ ժողովուրդն իր հերթին միշտ ուշադրության կենտրոնում էր պահում փառապանծ գվարդիականներին, նրանց ուղարկելով զանազան նվեր-ծանրոցներ, ոգևորող նամակներ և այլն։ Այդ կապերը պահպանվեցին նաև պատերազմից հետո, երբ դիվիզիան տեղաբաշխված էր Լիտվայի Շաուլյայ քաղաքում[10]։

Հայկական ազգային զորամիավորումների համաստեղության մեջ արժանի տեղ է գրավում Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան, որն իր մարտական ուղին սկսելով Կովկասի նախալեռներից, ավարտեց այն Բեռլինում, արժանանալով Թամանյան պատվավոր անվանը, պարգևատրվելով մարտական երեք շքանշաններով։ Դիվիզիան կազմավորվել է Երևանում՝ ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեի 1941 թ. նոյեմբերի 22-ի № 935 որոշման և ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի նոյեմբերի 28-ի № 3218 հրամանի համաձայն՝ Անդրկովկասյան ռազմաճակատի 45-րդ բանակի կազմում որպես 474-րդ հրաձգային դիվիզիա[11]։ 1942 թ. հունվարի 5-ին ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի № 780101 հրամանով դիվիզիան դարձավ ազգային զորամիավորում՝ ստանալով Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիա անվանումը։ Կազմավորման աշխատանքներն ընթանում էին գնդապետ Սիմեոն Գևորգի Զաքիյանի հրամանատարությամբ։ 1942 թ. փետրվարին Ղրիմի ռազմաճակատի հրամանատարության խնդրանքով գնդապետ Ս. Գ. Զաքիյանը

---

9 Книга о героях, с. 97—98.

10 Դիվիզիայի մարտական ուղու մասին ավելի մանրամասն տե՛ս Կ. Ա. Հարությունյան. 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին. Երևան, 1980։

11 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 56 ց. 12214, դ. 743, թ. 48։

նշանակվեց Ղրիմում կազմավորվող Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար։ Փետրվարի 23-ին նրան փոխարինեց փոխգնդապետ Անդրանիկ Սարգսի Սարգսյանը։ Գնդերի հրամանատարներ նշանակվեցին մայորներ՝ Միքայել Ալեքսանդրի Սիրունյանը (390-րդ հրաձգային գունդ), Սուքիաս Ասլանի Ասլանյանը (400-րդ հրաձգային գունդ), Սեպուհ Հարությունի Խանջյանը (526-րդ հրաձգային գունդ), Գուրգեն Սերգեյի Բաղիրովը (531-րդ հրետանային գունդ)։ Առանձին ստորաբաժանումների հրամանատարներ նշանակվեցին մայորներ Նիկոլայ Լևոնի Ադամյանը (280-րդ առանձին սակրավոր գումարտակ), Մովսես Արշակի Հովհաննիսյանը (167-րդ առանձին ականանետային դիվիզիոն), կապիտան Միսաք Համբարձումի Սարգսյանը (476-րդ առանձին կապի գումարտակ), ավագ քաղղեկ Վաչագան Վահանի Բայբուրթյանը (197-րդ առանձին բժշկասանիտարական գումարտակ) և ուրիշներ[12]։

1942 թ. հունվարի 12-ին հայերեն լեզվով լույս տեսավ դիվիզիայի քաղբաժնի «Կարմիր զինվոր» թերթը՝ սկզբում Ներսես Ոսկանի Կագրամանովի, ապա՝ Գուրգեն Հարությունյանի և Սիմոն Սարգսի Նալբանդյանի խմբագրությամբ։

1942 թ. օգոստոսի 5—8-ը Անդրկովկասյան ռազմաճակատի 45-րդ բանակի հատուկ հանձնաժողովը ստուգեց դիվիզիայի ընդհանուր վիճակը և գտավ, որ միավորումը մարտունակ է և պատրաստ ռազմաճակատ մեկնելու։ Ռազմաճակատ մեկնելու նախօրյակին դիվիզիան իր շարքերում ուներ 11782 մարդ՝ հաստիքով նախատեսված 12807-ի փոխարեն։ Նրանցից 11674-ը հայեր էին, 50-ը՝ ռուսներ, 12-ը՝ ուկրաինացիներ, 3-ը՝ վրացիներ, 2-ը՝ ադրբեջանցիներ, 41-ը՝ այլազգիներ։ Ինչպես տեսնում ենք, հայերը կազմում էին դիվիզիայի ողջ անձնակազմի 99,1 տոկոսը[13]։ Պատերազմի ժամանակ այս կազմը մնաց համարյա անփոփոխ և հայերը միշտ էլ կազմել են ողջ անձնակազմի բացարձակ մեծամասնությունը։

Օգոստոսի 8—11-ը դիվիզիայի զորամասերը Երևանից երկաթուղով փոխադրվում են Գրոզնի, որտեղ սկզբից մտնում են Անդրկովկասյան ռազմաճակատի Հյուսիսային զորախմբի 24-րդ, իսկ օգոստոսի 18-ից՝ 9-րդ բանակի կազմի մեջ։ Դիվիզիան պաշտպանական դիրքեր է գրավում Թերեքի աջ ափին՝ Բենո Յուրտ—Թերեք—Բալաշով տեղամասում, ետ մղում հակառակորդի տանկերի գրոհները, միաժամանակ պատրաստվելով վճռական հարձակման։ Սեպտեմբերի 26-ին, հրետանային նախապատրաստությունից հետո, դիվիզիայի զորամասերն աջակցող ուժերի հետ միասին անցնում են հարձակման՝ նպատակ ունենալով ազատագրել Թերեք, Թերսկոյե և Պրեդմոստնի ավանները։ Չնայած 4-օրյա կատաղի մարտերում դիվիզիայի զորամասերին չհաջողվեց ազատագրել այդ ավանները, բայց և այնպես փակվեց թշնամու ճանապարհը դեպի Գրոզնի։ Հոկտեմբերի սկզբներին դիվիզիան դուրս բերվեց բանակի ռեզերվ, որտեղ համալրվեց նոր ուժերով։ Այդ շրջանում դիվիզիայի հրամանատար նշանակվեց գնդապետ Արտաշես Արշակի Վասիլյանը, փորձված մի զինվորական, որը նույնպես Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի կադրերից էր, 1933—1934 թթ. եղել էր Հայկական 4-րդ լեռնահրաձգային երկրային գնդի հրամանատար։

Սկսած 1942 թ. հոկտեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի վերջերը դիվիզիայի զորամասերը Մալգոբեկի տակ հաջողությամբ ետ էին մղում հակառակորդի գրոհները՝ թույլ չտալով նրան ճեղքել-անցնել դեպի Գրոզնի։ Այդ ժամանակ դիվիզիան մտնում էր սկզբում 44-րդ, ապա՝ 58-րդ բանակի կազմի մեջ։

---

12 Տե՛ս 89-րդ Թամանյան կարմրադրոշ, Կուտուզովի 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշանակիր հայկական հրաձգային դիվիզիայի մարտական ուղին (1942—1945 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու. Երևան, 1985, էջ 677—685։

13 ՌԴ ՊՆԿՇ, ֆ. 45-րդ բանակի, ց. 9458, գ. 24, թթ. 496—504։

1943 թ. հունվարի 1—10-ը դիվիզիան հարձակողական մարտերով կրընկակոխ հետապնդում էր թշնամուն։ Հունվարի 2-ին նրա զորամասերը ազատագրում են Մալգոբեկ քաղաքը, 4-ին՝ Համիդիա բնակավայրը, 6-ին՝ գետանցում Թերեքը և 10-ին հասնում Սոլդատսկայա։ Շարունակելով հակառակորդի հետապնդումը հյուսիս-արևմտյան ուղղությամբ, դիվիզիայի զորամասերը 58-րդ բանակի երրորդ էշելոնում հունվարի 19-ից մինչև փետրվարի 9-ը առաջ են շարժվում Գեորգիևսկ, Մինեռալնիե Վոդի, Ստավրոպոլ, Տիխորեցկ, Գարբուզովսկայա բալկա երթուղով։ Հասնելով Գարբուզովսկայա բալկա, դիվիզիան դուրս է բերվում բանակի առաջին էշելոն և մարտական առաջադրանք ստանում՝ երեու ուղղությամբ հարձակել Նովո-Ջիրելիևսկայա բնակավայրը ու գրաստատ լինել 417-րդ դիվիզիայի հետ հարձակվելու Ռոդոկոպսկայայի ուղղությամբ։ Մյուս զորքերը ստիպված է պաշտպանություն ստանձնել Գորի շրջանում, ապահովելով և հարավ-արևելյան ապահովելը բանակի ձախ թևը։ Սակայն թշնամու ուժգնակաց տանկերի հարձակման հետևանքով փետրվարի 9—10-ին դիվիզիան ծանր կորուստներ է կրում։ Թշնամու տանկի դեմ մեկամարտում, զենքը ձեռքին հերոսաբար զոհվում է դիվիզիայի հրամանատար, գնդապետ Սրտաշես Վասիլյանը։ Նրա հետ միասին քաջի մահով ընկնում են 390-րդ հրաձգային գնդի հրամանատար, մայոր Գարեգին Խաչանյանը, 400-րդ հրաձգային գնդի հրամանատարի քաղաքով տեղակալ, մայոր Սուրեն Բաղրասարյանը և շատ ուրիշներ։ Չնայած ծանր կորուստներին, որը հետևանք էր բանակի հետախուզության սխալ տվյալների, դիվիզիայի զորամասերը այնուամենայնիվ ազատագրեցին Նովո-Ջիրելիևսկայան[14]։

Կարճ ժամանակամիջոցում որոշ չափով համալրվելով՝ դիվիզիան փետրվարի 15-ին պաշտպանական դիրքեր է գրավում Լիմաննո-Կիրպիլի, Կույբիշևսկ բնակավայրերի հարավային և հարավ-արևմտյան շրջաններում։ Սակայն նշված բնագծում դիվիզիան երկար չի մնում։ Փետրվարի 19-ին ստանալով 58-րդ բանակի հրամանատարության կարգադրությունը, նրա զորամասերը նոր հրամանատար, գնդապետ Նվեր Գևորգի Սաֆարյանի[15] գլխավորությամբ, երթով շարժվում են դեպի Ագովի ծովի ափին գտնվող Ծյսկ քաղաքը և փետրվարի 25-ից պաշտպանական դիրքեր գրավում Տագանրոգյան ծովածոցի երկայնքով՝ Մարգարիտովկա—Ստարո-Շչերբինովկա բնագծում։ Այստեղ դիվիզիան մնում է մինչև 1943 թ. օգոստոսի վերջերը, ստանում լիարժեք համալրումներ և, Տագանրոգյան ծոցի ափերի պաշտպանության հետ մեկտեղ, նախապատրաստվում հարձակողական մարտերի։ Օգոստոսի վերջերին դիվիզիայի զորամասերը երկաթուղով փոխադրվում են հարավ և սեպտեմբերի սկզբներին Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի 18-րդ բանակի կազմում ելման դիրքեր գրավում Թամանյան թերակղզու՝ Շապսուգսկայա, Նիկոլաևսկի, Գապոնովսկի, Նիժնի Բականսկի բնակավայրերի, Սախարնայա գոլովա բարձունքի և Դոլգայա լեռան շրջաններում։

Սեպտեմբերի 9-ից մինչև հոկտեմբերի 4-ը դիվիզիայի զորամասերը հարձակողական մարտեր էին մղում հակառակորդի դեմ՝ մեկը մյուսի ետևից ճեղքելով թշնամու ամրակուռ պաշտպանական գիծը, որը բաղկացած էր իրար հաջորդող 7 շերտերից։ Այդ մարտերում ցուցաբերած անօրինակ սքանչելի համար դիվիզիայի անձնակազմից Խորհրդային Միության հերոսի

---

14 Նովո-Ջիրելիևսկայայի ազատագրման 35-ամյակի առթիվ, ի պատիվ բնակավայրն ազատագրողների, 1978 թ. ավանի փողոցներից մեկը վերանվանվել է Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի անվան։

15 Ն. Գ. Սաֆարյանը դիվիզիայի հրամանատար է նշանակվել 1943 թ. փետրվարի 19-ին։ Նա նույնպես Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի կազմերից էր։ 1936 թ. մայիսի 29-ին դիվիզիայի 2-րդ լեռնահրաձգային վաշտի հրամանատար-քաղաքակ եղած ժամանակ պարգևատրվել էր «Պատվո նշան» շքանշանով։

կոչման են արժանանում ավագ սերժանտներ Հունան Մակիչի Ավետիսյանը, Սուրեն Սմբատի Առաքելյանը և շարքային Ջահան Սարգսի Կարախանյանը[16]։

Թամանյան թերակղզին գերմանաֆաշիստական զավթիչներից մաքրելու մարտական գործողությանն ամենաակտիվ կերպով մասնակցելու և այդ ընթացքում ուշադրության արժանացած արիության համար Գերագույն գլխավոր հրամանատարի 1943 թ. հոկտեմբերի 9-ի հրամանով դիվիզիային շնորհվում է Թամանյան պատվավոր անվանում[17]։ Նույն թվականի դեկտեմբերի 21-ին գեներալ-մայորի կոչում է շնորհվում Նվեր Սաֆարյանին։

Թամանի ազատագրումից հետո Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիան եռանդուն նախապատրաստվում է մարտեր մղելու Կերչում և Ղրիմում։ Նոյեմբերի 21—25-ը նրա զորամասերը Կերչի նեղուցով փոխադրվում են Թիղանրոգի և Առանձին մերձծովյան բանակի եռամում 1943 թ. դեկտեմբեր—1944 թ. հունվար-ապրիլ ամիսներին մասնակցում Կերչ թերակղզու ազատագրմանը։ Կերչ քաղաքի ազատագրման համար մղված մարտերում հրամանատարության առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ընթացքում ուշադրաված արիության ու քաջության համար դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. ապրիլի 24-ի հրամանագրով պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով[18]։

1944 թ. ապրիլի 11-ից մինչև մայիսի 12-ը դիվիզիան Մերձծովյան բանակի 3-րդ լեռնահրաձգային կորպուսի կազմում մասնակցում է Ղրիմի թերակղզու և հատկապես Սևաստոպոլի ազատագրմանը։ Այդ ընթացքում հրամանատարության առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և ցուցաբերած հերոսության, տոկունության ու արիության համար դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. մայիսի 24-ի հրամանագրով պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով, իսկ նրա 390-րդ և 400-րդ հրաձգային գնդերը՝ Գերագույն գլխավոր հրամանատարի 1944 թ. մայիսի 24-ի հրամանով ստանում են Սևաստոպոլյան պատվավոր անվանում[19]։ Մայիսի 7—12-ը՝ Սևաստոպոլի համար մղված մարտերում առավել աչքի ընկած ավագ սերժանտներ Այդին Հարությունի Հարությունյանին, Վարդգես Արշակի Ոսոտոմյանին, Հարություն Ռուբենի Մկրտչյանին, լեյտենանտներ Սիմոն Կարապետի Բաղդասարյանին և Խորեն Արմենակի Խաչատրյանին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թ. մարտի 24-ի հրամանագրով շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում[20]։ Սևաստոպոլի հերոսամարտերից հետո դիվիզիայի զորամասերը մինչև օգոստոսի վերջերը մնում են Ղրիմում, կատարելագործում իրենց մարտական վարպետությունը և, միաժամանակ, մասնակցում հացահատիկի բերքահավաքի աշխատանքներին։

1944 թ. օգոստոսի 30-ից դիվիզիայի զորամասերը փոխադրվում են Լեհաստան և սեպտեմբերի 12-ին կենտրոնանալով Մելնիկ, Ադամովա զաստավա շրջանում մտնում են 1-ին Բելոռուսական ռազմաճակատի 33-րդ բանակի 16-րդ հրաձգային կորպուսի կազմի մեջ։ Մինչև հոկտեմբերի կեսերը դիվիզիայի զորամասերը վարժվում էին հակառակորդի դիրքային պաշտպանությունը ճեղքելուն։ Հոկտեմբերի 19—26-ը նրանք տեղափոխվում են Լյուբլինիո 6 կմ հարավ-արևելք ընկած Կոմասագիայի շրջան, իսկ 1945 թ. հունվարի 5-ին՝ Վարշավայից հարավ, Վիսլա գետի ձախ ափին գտնվող Պուլավիի հենակետը։ Հունվարի 14—29-ը դիվիզիայի զորամասերը հարձակողա-

---

16 Դիվիզիայի առաջին հերոսներին այդ բարձր կոչումը շնորհվել է հետմահու՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. մայիսի 16-ի հրամանագրով։

17 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 89-րդ դիվիզիայի, ց. 2 գ. 31 թ. 277։

18 Նույն տեղում, թ. 276։

19 Նույն տեղում, թ. 277։

20 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 33, ց. 793756, գ. 3, թ. 165, գ. 46, թ. 125, գ. 32, թ. 12, գ. 4, թ. 49, գ. 51, թ. 142։

կան հաջող մարտեր են մղում անտառներում, առանձին հենակետերում և բնակավայրերում՝ շրջապատված հակառակորդի խմբավորումների ոչնչացման նպատակով։ Առանձնապես համառ մարտեր ծավալվեցին հունվարի 17—19-ը՝ Ռուսկի Բրոդ կոչվող բնակավայրի մոտ գտնվող անտառում՝ թշնամու ավելի քան 6000 մարդուց բաղկացած խմբավորման ոչնչացման ժամանակ, որտեղ հերոսաբար զոհվեցին դիվիզիայի հրամանատարի շարային գծով տեղակալ, գնդապետ Գրիգոր Դարչոյի Բլբուլյանը, 531-րդ հրետանային գնդի հրամանատար, փոխգնդապետ Վասիլի Իվանովիչ Տինսկին, ծանր վիրավորվեց 390-րդ հրաձգային Սևաստոպոլյան գնդի հրամանատար, գնդապետ Երվանդ Աղաջանի Կարապետյանը։

Հունվարի 29-ին դիվիզիայի զորամասերը մարտերով անցան ֆաշիստական Գերմանիայի սահմանը։ Կրնկակոխ հետապնդելով թշնամուն, նրանք փետրվարի 16-ին Օդերի Ֆրանկֆուրտից 3,5 կմ հարավ գետանցում են Օդերը և 2,5 կմ երկարություն ու 700—800 մ խորություն ունեցող հենակետ գրավում նրա ձախ ափին։ Ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այդ հենակետը դիվիզիան պաշտպանում է մինչև ապրիլի 16-ը։ Ապրիլի 16-ից մինչև մայիսի 2-ը դիվիզիան 1-ին Բելոռուսական ռազմաճակատի 33-րդ բանակի, ապա 3-րդ հարվածային բանակի 38-րդ հրաձգային կորպուսի կազմում մասնակցում է Բեռլինի գրավման մարտական գործողությանը։ Ապրիլի 16-ի առավոտյան անցնելով հարձակման, դիվիզիան կատաղի մարտերով շարժվում է դեպի Բեռլին՝ ոչնչացնելով Ցշեցշնով և Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքները։ Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքի գրավման ժամանակ ցուցաբերած քաջության համար Խորհրդային Միության հերոսի կոչման է արժանանում 400-րդ հրաձգային Սևաստոպոլյան գնդի 1-ին հրաձգային գումարտակի հրամանատար, մայոր Հրանտ Գևորգի Բաբայանը[21]։ Ապրիլի 29-ին դիվիզիան արդեն փողոցային մարտեր էր մղում Բեռլինում, որտեղ Հումբոլդ-Հայն այգում հանդիպում է պաշտպանական հզոր ամրություններ ունեցող բերդի կայազորի կատաղի դիմադրությանը։ Մայիսի 2-ին ժամը 14-ին ամրոցի կայազորն անձնատուր է լինում։ Դիվիզիայի զորամասերը գերի են վերցնում գերմանական 5112 զինվոր, սպա, գրավում հարուստ ավար[22]։

Բեռլինի գրավման մարտերի ժամանակ հակառակորդի պաշտպանությունը ճեղքելու և ցուցաբերած սխրանքների համար Հայկական 89-րդ Թամանյան կարմրադրոշ կարմիր աստղի շքանշանակիր հրաձգային դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թ. մայիսի 28-ի հրամանագրով պարգևատրվում է Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանով[23]։ Բեռլինի գրավումից հետո դիվիզիան շարժվում է դեպի արևմուտք և հաղթանակը դիմավորում Էլբայի ափերին։

Սկսած 1942 թ. օգոստոսի 8-ից մինչև 1945 թ. մայիսի 9-ը դիվիզիան անցավ 7250 կմ, որից 3640-ը՝ համառ մարտերով։ Այդ ընթացքում նրանք ազատագրեցին ավելի քան 900 բնակավայր և 30 քաղաք։ Մարտական գործողությունների ընթացքում դիվիզիայի ավելի քան 12.000 մարտիկներ ու սպաներ պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով։ Նրանցից 9-ը արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ 8-ը դարձան Փառքի շքանշանի երեք աստիճանների լրիվ ասպետ։ 1945 թ. սեպտեմբերին դիվիզիան գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի ղեկավարությամբ վերադարձավ Հայաստան և տեղաբաշխվեց Երևանում, Էջմիածնում ու Քանաքեռում։ Այն գոյություն ունեցավ մինչև 1956 թ. ամառը և համարվում էր

---

21 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 33, ց. 793756, գ. 4, թ. 30 (հերոսի կոչում է շնորհվում ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության 1946 թ. մայիսի 15-ի հրամանագրով)։

22 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 89-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 79, թթ. 125—127։

23 Նույն տեղում, Տեղեկագիրք ծառայողական նպատակների համար, գույքային № 1389, էջ 270։

Անդրկովկասյան զինվորական օկրուգի առաջատար զորամիավորումներից մեկը[24],

Հայրենական մեծ պատերազմի տարիներին փառապանծ մարտական ուղի անցավ նաև Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիան: Այն կազմավորվել է ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1941 թ. օգոստոսի 9-ի № 459 որոշման և Գերագույն զլխավոր հրամանատարության զորակայանի 1941 թ. օգոստոսի 26-ի հրահանգի համաձայն, Անդրկովկասյան ռազմաճակատի 45-րդ բանակի կազմում՝ Ստեփանավան քաղաքում[25], 1942 թ. փետրվարի 5-ին դիվիզիան պաշտոնապես ստանում է հայկական անվանումը[26]: Միավորման առաջին հրամանատարն էր գնդապետ Արտաշես Վասիլյանը: 1942 թ. փետրվարի 23-ից հայերեն լեզվով սկսեց հրատարակվել դիվիզիայի քաղբաժնի «Մարտական դրոշ» թերթը (խմբագիր՝ Հարություն Գաբրիելի Մկրտչյան, քարտուղար՝ Գարեգին Բախշիի Սարինյան (Բես), գրական աշխատող՝ Վախթանգ Ստեփանի Անանյան): Դիվիզիայի կազմի մեջ մտնում էին՝ 675-րդ, 677-րդ, 684-րդ հրաձգային և 964-րդ հրետանային գնդերը, 682-րդ սակրավոր, 852-րդ կապի և 486-րդ բժշկասանիտարական առանձին գումարտակները, հակատանկային և ղենիթահրետանային դիվիզիոններ, այլ ստորաբաժանումներ: 1942 թ. դեկտեմբերի 2-ին դիվիզիան Լենինականից (Գյումրի) 17 գնացքակազմերով մեկնեց գործող բանակ և Մոզդոկի տակ մտավ Անդրկովկասյան ռազմաճակատի 44-րդ բանակի կազմի մեջ: Այդ ժամանակ նա իր շարքերում ուներ 13837 զինվոր ու սպա, որից՝ 13460 հայ, 168 ռուս, 71 ուկրաինացի, 18 վրացի, 15 հրեա, 10 բելոռուս, 8 ադրբեջանցի և 27 այլազգիներ: Ինչպես տեսնում ենք, դիվիզիայի անձնակազմի 97,3 տոկոսը կազմում էին հայերը[27]:

1942 թ. դեկտեմբերի 8-ից մինչև 1943 թ. հունվար տևած պաշտպանական մարտերում դիվիզիան կրեց ծանր կորուստներ, բայց կարողացավ կատարել բանակի հրամանատարության առաջադրանքը՝ փակել թշնամու առաջխաղացումը: 1943 թ. հունվարի սկզբներին դիվիզիան, բանակի մյուս միավորումների հետ միասին, անցավ հարձակման: Մինչև ապրիլ ամիս նրա զորամասերը կատաղի մարտերով Թերեքի ափերից հասան մինչև Կուբանի ափերը՝ ազատագրելով Չեչենո-Ինգուշական ԻԽՍՀ-ի, Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերի բազմաթիվ քաղաքներ, գյուղեր ու բնակավայրեր: Այդ մարտերում դիվիզիան մարտնչում էր 44-րդ, 58-րդ, 37-րդ, 9-րդ և 46-րդ բանակների կազմում[28]: Ապրիլի սկզբներին դիվիզիայի զորամասերը փոխադրվեցին Դոնի-Ռոստովի մարզի Միլլերովոյի շրջան, որտեղ մնացին մինչև հուլիսի 12-ը, իսկ այնուհետև տեղափոխվեցին Խարկովի մարզ: Սկսած օգոստոսի 24-ից դիվիզիայի զորամասերը թշնամու դեմ հարձակողական մարտեր էին մղում Խարկով—Լոզովայա երկաթգծի ուղղությամբ: Սեպտեմբերի 20-ին Նովո-Պոդկրյաժ, Մոգիլև—2, Մոլդովկա, Դոմոտկան բնակավայրերից հյուսիս-արևելք դիվիզիայի զորամասերը հակառակորդի ավիացիայի ռմբակոծության տակ գետանցեցին Դնեպրը և մարտերը շարունակեցին նրա աջ ափին: Ապա դիվիզիան, մարտերով ազատագրելով մի շարք բնակավայրեր, մոտեցավ Կրիվոյ Ռոգին: Հետագայում դիվիզիան 7-րդ գվարդիական բանակի կազմում հատկապես աչքի ընկավ Կիրովոգրադ քա-

---

24 Դիվիզիայի մարտական ուղու մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. Մ. Նալբանդյան. Թամանցիները. Երևան, 1960: Ղ. Մ. Դալլաքյան. Մարտական 89. Երևան, 1966: Ե. Ս. Կարապետյան. Անմահության ճանապարհով. Երևան, 1969: Ս. Մ. Հակոբյան. Հերոսական մարտերում. Երևան, 1975: Խ. Հ. Բարսեղյան. Կրակների միջով. Երևան, 1982:

25 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 56, ց. 12214, գ. 997, թթ. 136—137:

26 Նույն տեղում, ֆ. Անդրկովկասյան զինվորական օկրուգի, ց. 13185, գ. 12, թթ. 1—2:

27 Նույն տեղում, ֆ. 45-րդ բանակի, ց. 9448, գ. 12, թթ. 209—210:

28 Նույն տեղում, ֆ. 409-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 1, թթ. 4—5:

զաքի համար մղված մարտերում, որն ազատագրվեց 1944 թ. հունվարի 7-ին։ Հաջորդ օրը Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանով 409-րդ դիվիզիային շնորհվեց Կիրովոգրադյան պատվավոր անվանում[29]։ Կիրովոգրադի ազատագրման համար մղված մարտերում հերոսաբար զոհվեցին դիվիզիայի բազմաթիվ ռազմիկներ, նրանց թվում նաև 964-րդ հրետանային գնդի հրամանատար, փոխգնդապետ Սարգիս Ղազարյանը։

1944 թ. փետրվարի 7-ին դիվիզիայի հրամանատար նշանակվեց գեներալ-մայոր Եվստաֆի Պետրովիչ Գրեչանին, որն այդ պաշտոնում մնաց մինչև Հայրենական պատերազմի հաղթական ավարտը։ Նրա գլխավորությամբ շարունակելով հարձակումը Կիրովոգրադից հարավ-արևմտյան ուղղությամբ, դիվիզիայի զորամասերը մասնակցեցին Պոմոշչնայա և Նովոուկրաինկա երկաթուղային խոշոր կայարանների ազատագրմանը, որի համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1944 թ. մարտի 29-ի հրամանագրով դիվիզիան պարգևատրվեց Բոգդան Խմելնիցկու 2-րդ աստիճանի շքանշանով[30]։ Այնուհետև դիվիզիան ակտիվորեն մասնակցեց Յասսի—Քիշինևյան գործողությանը՝ Քիշինևի ուղղությամբ։ Դիվիզիայի խոշոր նվաճումն էր Բախուշի շրջանում ֆաշիստական զորքերի մնացորդների վերացումը։ Գործողության ավարտից հետո, դիվիզիայի զորամասերը Ռումինիայի տարածքում հետապնդելով հակառակորդի նահանջող ուժերին, սեպտեմբերի վերջերին դուրս եկան Հունգարիայի պետական սահմանը, որից հետո 2-րդ Ուկրաինական ռազմաճակատի 53-րդ բանակի կազմում 1944 թ. հոկտեմբերի 6—28-ը մասնակցեցին Դեբրեցենյան մարտական գործողությանը։ Նրանք հունգարական Կունագոտա և Մեզեկովաշհազա բնակավայրերի մոտ ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը և հոկտեմբերի 9-ին Տոսեգ, Տիսսա-Վարկոն բնակավայրերի շրջանում հաղթահարելով Տիսսա գետը, հենակետ գրավեցին նրա աջ ափին։ Մինչև հոկտեմբերի 16-ը դիվիզիայի զորամասերը իրենց ձեռքում էին պահում հենակետը։ Այնուհետև հենակետի պաշտպանությունը նրանք հանձնեցին մեկ այլ միավորման և տեղափոխվեցին Տյորեկսենտմիկլոշ քաղաքից արևմուտք։ Հոկտեմբերի 18-ին հակառակորդը, այդ տեղամասում կենտրոնացնելով ուժեր, տանկերի ու ինքնագնաց հրանոթների աջակցությամբ դիմեց հակագրոհի։ Թշնամուն հաջողվեց ճեղքել դիվիզիայի պաշտպանությունը և մինչև հոկտեմբերի 20-ը դուրս գալ նրա թիկունքը։ Սակայն դիվիզիան անկորուստ դուրս եկավ շրջապատումից և հոկտեմբերի 23-ին կենտրոնացավ Խեկի շրջանում։ 1944 թ. հոկտեմբերի 29-ից մինչև 1945 թ. փետրվարի 13-ը դիվիզիան աչքի ընկավ նաև Բուդապեշտյան մարտական գործողության ժամանակ՝ գործելով 7-րդ գվարդիական բանակի 25-րդ գվարդիական հրաձգային կորպուսի կազմում։ Հոկտեմբերի 31-ին նրա զորամասերը կրկին հաղթահարեցին Տիսսան, ապա Զադվա գետը և գրավեցին Պուստամոնոշտոր քաղաքը, որը գտնվում էր Բուդապեշտի արևելյան մատույցներում։ Շարունակելով առաջխաղացումը, դեկտեմբերի 9-ին դիվիզիան արդեն մարտեր էր մղում Բուդապեշտի Ֆոտ արվարձանում[31]։

Դիվիզիան ակտիվորեն մասնակցեց նաև Չեխոսլովակիայի ազատագրման մարտերին, հատկապես աչքի ընկավ 1945 թ. ապրիլի 4-ին Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայի ազատագրման ժամանակ՝ արժանա-

---

29 Приказы Верховного Главнокомандующего в период Великой Отечественной войны Советского Союза. М., 1975, с. 99—102.

30 409-րդ հրաձգային Կիրովոգրադյան-Բրատիսլավյան Բոգդան Խմելնիցկու շքանշանակիր հայկական դիվիզիայի մարտական ուղին (1941—1945 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու. Երևան. 1980, էջ 19։

31 Հունգարիայում դիվիզիայի մարտական գործողությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Կ. Ա. Հարությունյան. Հայ ռազմիկները Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում (1944—1945 թթ.). Երևան, 1990։

նալով Գերագույն գլխավոր-հրամանատարի շնորհակալությանը և Բրատիսլավյան պատվավոր անվանման։ Բրատիսլավայից հետո դիվիզիայի զորամասերը 1945 թ. մայիսի 6—11-ը ակտիվորեն մասնակցեցին Պրագայի մարտական գործողությանը և իրենց ուղին ավարտեցին Չեխոսլովակիայի մայրաքաղաքի մատույցներում՝ Ստրիտեժ-Պետրովկի շրջանում, որտեղ և դիմավորեցին հաղթանակը[82]։ Դրանից հետո դիվիզիան տեղափոխվեց Ավստրիա, ապա՝ Հունգարիա, ուր 7-րդ գվարդիական բանակի հրամանատարի 1945 թ. հուլիսի 2-ի № 0177 հրամանի համաձայն կազմացրվեց[83]։

Խորհրդային Հայաստանի տարածքում կազմավորված մյուս հայկական ազգային զորամիավորումը 408-րդ հրաձգային դիվիզիան էր։ Այն կազմավորվեց ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1941 թ. օգոստոսի 9-ի № 459 որոշման համաձայն՝ Վաղարշապատում (էջմիածին), ապա՝ Երևանում[84]։ Դիվիզիան մտնում էր Անդրկովկասյան ռազմաճակատի 45-րդ բանակի մեջ, բաղկացած էր երեք հրաձգային՝ 663-րդ, 670-րդ, 672-րդ և մեկ հրետանային՝ 963-րդ գնդերից, 681-րդ սակրավոր, 851-րդ կապի և 485-րդ բժշկասանիտարական առանձին գումարտակներից և այլ ստորաբաժանումներից։ 1942 թ. մարտին դիվիզիան պաշտոնապես ստացավ Հայկական անվանում[85] և սկսեց համալրվել հիմնականում հայերով։ Ռազմաճակատ մեկնելուց առաջ, 1942 թ. սեպտեմբերի 25-ի դրությամբ, դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 11463 մարդուց, որից հայեր՝ 11125, ռուսներ՝ 210, ուկրաինացիներ՝ 67, հրեաներ՝ 15, վրացիներ՝ 11, այլազգիներ՝ 35 հոգի[86]։ 1942 թ. մարտի 15-ից հրատարակվեց դիվիզիայի «Հանուն հայրենիքի» թերթը՝ հայերեն լեզվով, շաբաթական երեք անգամ։ Թերթի խմբագիրն էր ավագ քաղաքական Արշավիր Մնացականի Հակոբյանը, քարտուղարը՝ Սուրեն Երվանդի Հակոբյանը (երկուսն էլ հետագայում դարձան պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր), որին մի քանի ամիս անց փոխարինեց քաղաքական Գևորգ Արմենակի Հայրյանը (հետագայում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)։ Ռազմաճակատ մեկնելուց առաջ դիվիզիայի հրամանատարն էր կարգային զինվորական, գնդապետ Պավել Նիկոլաևիչ Կիցուկը, զինվորական կոմիսարը՝ Ս. Մ. Ամիրջանովը, քաղբաժնի պետը՝ ավագ գումարտակային կոմիսար Սիմոն Մկրտչի Սարգսյանը (հետագայում գնդապետ, պատմական գիտությունների թեկնածու), հրետանու պետը՝ մայոր Ս. Գ. Վարդանյանը։ Գնդերի հրամանատարներն էին մայորներ՝ Սուրեն Հովհաննեսի Բաբայանը (663-րդ գունդ), Սերոբ Միսաքի Աղիզյանը (670-րդ գունդ), Տիգրան Գաբրիելի Սայադյանը (672-րդ գունդ) և Արամայիս Սարգսի Եփրիմյանը (963-րդ հրետանային գունդ), 485-րդ առանձին բժշկասանիտարական գումարտակի հրամանատարն էր 2-րդ կարգի զինվորական բժիշկ Արծրուն Սարգսի Կծոյանը (հետագայում բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր), կոմիսարը՝ ավագ քաղաքական Երվանդ Մկրտչի Խալեյանը (հետագայում պատմական գիտությունների թեկնածու) և այլն։

Խորհրդային Հայաստանի պետական և կուսակցական մարմինները մշտապես դիվիզիան պահում էին իրենց ուշադրության կենտրոնում, այն համալրում լավագույն կադրերով։ Այսպես, օրինակ, դիվիզիայի շտաբի կոմիսար նշանակվեց Երևանի ռուսաց լեզվի և գրականության ինստիտուտի տնօրեն, ավագ քաղաքական Անդրանիկ Իսահակյանը, քաղբաժնի պետի տեղակալ՝ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատ-

---

82 Ավելի մանրամասն տե՛ս Կ. Ա. Հարությունյան. Հայ ռազմիկները Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում (1944—1945 թթ.). Երևան, 1983։

83 ՌԴ ՊՆԿԱ, Տեղեկագիրք՝ հրաձգային դիվիզիաների կազմավորման, վերակազմավորման, ենթակայության և մարտական կազմի մասին, գույքային թիվ 6393, էջ 727։

84 Նույն տեղում, ֆ. 56, ց. 12214, 996, թ. 148։

85 Նույն տեղում, ֆ. 45-րդ բանակի, ց. 28507, գ. 1, թ. 86։

86 Նույն տեղում, ֆ. 408-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 13, թթ. 1—5։

գամավոր, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, ավագ քաղղեկ Գարեգին Բախշիի Պետրոսյանը (հետագայում ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր), քաղաքաժնի պրոպագանդայի գծով ավագ հրահանգիչ՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի պատմության և նյութագիտության ինստիտուտի տնօրեն, ավագ քաղղեկ Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը (հետագայում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի ԳԱ ակադեմիկոս, փոխպրեզիդենտ, Երևանի պետական համալսարանի ռեկտոր) և ուրիշներ։

Մինչև ռազմաճակատ մեկնելը դիվիզիայի հիմնական խնդիրը խորհրդա-թուրքական սահմանի մի հատվածի պաշտպանությունն էր՝ Անի քաղաքի ավերակների դիմացից մինչև Դվին ընկած 95 կմ տեղամասում, ինչպես նաև ռազմաճակատի համար երթային վաշտերի պատրաստումն ու ուղարկումը։ Մինչև ռազմաճակատ մեկնելը դիվիզիան գործող բանակ ուղարկեց ավելի քան 10 000 մարտիկներ, հրամանատարներ ու քաղաշխատողներ[87]։

1942 թ. սեպտեմբերի 11—18-ը դիվիզիայի զորամասերը երկաթուղով փոխադրվեցին Փոթի (Վրաստան), այնտեղից էլ նավերով Սև ծովի վրայով՝ Տուապսե, որտեղից կատարելով հետիոտն երթային արշավ, ելման դիրքեր գրավեցին Նովոռոսիյսկի շրջանում՝ Ցեմեսի և Իփբացկի ծովախորշերի ու Կաբարդինկա տեղամասում։ Դիվիզիան մտավ Անդրկովկասյան ռազմաճակատի Սևծովյան զորախմբի 47-րդ համազորային բանակի կազմի մեջ[88], որի հրամանատարը գեներալ-լեյտենանտ Ա. Ա. Գրեչկոն էր (հետագայում Խորհրդային Միության մարշալ)։ Սեպտեմբերի 23-ին, երբ դիվիզիայի 670-րդ գնդի վերջին զորաշարքերն էին ափ իջեցվում Գելենջիկի մոտակայքում, նրանց վրա օդից հարձակվեցին ֆաշիստական 9 ռմբակոծիչներ։ Առաջին իսկ վայրասլաց թռիչքի ռմբակոծման հետևանքով զոհվեցին գիշանգղների հետ մենամարտի բռնված զենիթային գնդացրի անձնակազմի անդամները։ Զոհված մարտիկներին փոխարինեցին լեյտենանտ Վ. Պողոսյանը, ավագ քաղղեկ Մկրտիչ Ներսիսյանը և ուրիշներ։ Երկար հերթազարկով նրանք ցած գցեցին հակառակորդի ինքնաթիռներից մեկը և հարկադրեցին մյուսներին բարձրություն հավաքել[89]։

1942 թ. սեպտեմբերի 25-ի առավոտյան 47-րդ բանակի զորքերը, հրետանային ու ավիացիոն նախապատրաստությունից հետո, անցան հարձակման և մինչև ամսի 27-ը տևած դաժան մարտերում գրեթե ամբողջությամբ ոչնչացրին 3-րդ ռումինական լեռնահրաձգային դիվիզիան։ Դրանից հետո գերմանաֆաշիստական զորքերը Նովոռոսիյսկի ուղղությամբ անցան պաշտպանության, և այլևս այստեղ խոշոր ուժերով հարձակվելու փորձեր չարեցին։ Այսպիսով, շնորհիվ 47-րդ բանակի ջանքերի, որում արժանի ավանդ ուներ նաև Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիան, ձախողվեց Նովոռոսիյսկի վրայով Անդրկովկաս ներխուժելու հիտլերյան պլանը։ Գործելով հարձակման գլխավոր ուղղությամբ՝ Աբին դետի երկայնքով դեպի Կրասնայա Պոբեդա և Սկաժիննայա բաբա բնակավայրերը, դիվիզիայի զորամասերը համառ մարտերում թշնամուն հասցրին ուժեղ հարվածներ՝ նրան ստիպելով ետ քաշվել դեպի Աբինսկայա։ Հետապնդելով թշնամուն, դիվիզիայի 672-րդ հրաձգային գունդը ազատագրեց Զումատովո, Էրիվանսկի, Լինդրով, Գրեչկի 1-ին, Կրասնայա պոբեդա բնակավայրերը։ Սեպտեմբերի 27-ին հակառակորդը Էրիվանսկի և Լինդրովի ուղղությամբ դիմեց հակագրոհի, բայց հանդիպելով ուժեղ հակահարվածի, վերջնականապես ետ շպրտ-

---

87 Ա. Մ. Հակոբյան. Հերոսական մարտերում. Երևան, 1975, էջ 10։

88 ՍԴԱ ՊՆԿԱ, ֆ. 408-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 13, թթ. 1—5։

39 С. М. Саркисьян. 408-я Армянская стрелковая дивизия в битве за Кавказ. Ереван, 1985, с. 41.

վեց[40]։ Գնդի հրամանատար, մայոր Տիգրան Սայադյանը դիվիզիայում առաջիններից մեկը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[41]։

Նովոռոսիյսկի տակ պարտություն կրելուց հետո, գերմանաֆաշիստական հրամանատարությունը որոշեց փոխել հարձակման ուղղությունը և հիմնական ջանքերը կենտրոնացնել Տուապսեի ուղղությամբ։ Թշնամու մտադրությունը խափանելու նպատակով խորհրդային զորքերի Սևծովյան խմբավորման հրամանատարությունն անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկեց Տուապսեի ուղղությամբ գործող իր բանակներն ուժեղացնելու և Տուապսեի պաշտպանական շրջանի ամրապնդման համար։ Մասնավորապես ուժեղացվեց 18-րդ բանակը, որի մեջ մտցվեցին մի շարք նոր միավորումներ, այդ թվում նաև Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիան։ Դիվիզիայի փոխադրման հրամանը տրվեց սեպտեմբերի 28-ին՝ 47-րդ բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ա. Ա. Գրեչկոյի կողմից։ Այդ հրամանի համաձայն դիվիզիայի հիմնական ուժերը, առանց 672-րդ հրաձգային գնդի, 963-րդ հրետանային գնդի 1-ին և 2-րդ դիվիզիոնների և վարժական գումարտակի[42], մինչև հոկտեմբերի 2-ը նավերով փոխադրվեցին Տուապսեի պաշտպանական շրջան, որտեղ անցան 18-րդ բանակի հրամանատարի օպերատիվ ենթակայության տակ։ Հոկտեմբերի 3-ին դիվիզիայի հրամանատարը մարտական առաջադրանք ստացավ շարժվել դեպի Փշիշ գետի հովիտը, պաշտպանություն զրավել Ալթուբինալ բնակավայրի շրջակայքի վրա իշխող բարձունքների շրջանում, թույլ չտալ հակառակորդի ճեղքումը Փշիշի հովտում և առաջխաղացումը դեպի Տուապսե Տիխոնովկա—Տուապսե խճուղով։ Կատարելով հրամանը, դիվիզիան հոկտեմբերի 4-ին մտավ Փշիշ գետի հովիտ, շարժվեց Տուապսե—Հաջիջենսկ խճուղով, առաջապահով անցավ Գոյթղ գյուղը և դուրս եկավ Պելիկո խուտորի շրջանը։ Հոկտեմբերի 5-ին հակառակորդից մաքրվեցին Ֆերեվալնի, Կանժան, Ալթուբինալ բնակավայրերը և վերոհիշյալ բարձունքները։ Սակայն թշնամին չէր ուզում տեղի տալ. էլ ավելի ուժեղացնելով իր 17-րդ բանակի հարվածային խմբավորումը, նա դարձյալ նետվեց առաջ՝ ձգտելով ինչ գնով էլ լինի դուրս գալ Փշիշ գետ, Սեմաշխո լեռ, Գոյթղ, Շահումյան գյուղերի բնագիծ։ 408-րդ դիվիզիան, 18-րդ բանակի մյուս միավորումների հետ մեկտեղ, համառ մարտերով փորձում էր կասեցնել հակառակորդի առաջխաղացումը դեպի Օստրովսկի կիրճ, Գոյթղ լեռնանցք և Շահումյան ավան։ Դիվիզիայի անձնակազմը հերոսաբար և հաջողությամբ էր կատարում դժվարին առաջադրանքը, սակայն նրա թևերում գործող զորամասերի նահանջի հետևանքով այն հոկտեմբերի 14—15-ին մեկուսացվեց բանակի հիմնական ուժերից և իր թիկունքներից, որոնք գտնվում էին Ինդյուկի շրջանում։ «Սննդամթերքի և ռազմամթերքի սուղ պաշարները չէին կարող ապահովել գործող ստորաբաժանումների կանոնավոր մարտը,—իր հուշերում գրում է Ա. Ա. Գրեչկոն,—մեկ գծի վրա մարտաշարով ձգված 408-րդ հրաձգային դիվիզիան խորությամբ մարտակարգեր ստեղծելու համար չունենալով ուժեր, օդախային պաշտպանությամբ, վաշտերի հենակետերի միջև 1,5—2 կմ ճեղքվածքների առկայությամբ, վեց օր անընդհատ պահում էր 25—30 կիլոմետրանոց գոտին, ամեն օր ետ մղելով հարձակվող թշնամու գրոհները»[43]։ Կատաղի մարտեր էին գնում յուրաքանչյուր բարձունքի, ամեն մի արահետի ու թիզ հողի համար։ Հակառակորդը ինքնաթիռներից դիվիզիայի գրաված դիրքերում գտնվող անտառի վրա դյուրավառ հեղուկ էր շաղ տալիս։ Անտառն այրվում էր, բայց չնայած դրան,

---

40 Ս. Մ. Սարգսյան. Այրվող անտառ. Երևան, 1965, էջ 115։

41 Ք. Գ. Գրիգորյան. Հայ ժողովրդի մասնակցությունը Կովկասի պաշտպանությանը. Երևան, 1971, էջ 59։

42 ՌՈ ՊՆԿԱ, ֆ. 18-րդ բանակի, ց. 6367, գ. 59, թ. 5 (վերոհիշյալ գունդը և ստորաբաժանումները դիվիզիայի հիմնական ուժերին միացան հոկտեմբերի կեսերին)։

43 Ա. Ա. Գրեչկո. Ճակատամարտ Կովկասի համար. Երևան, 1969, էջ 241։

դիվիզիայի մարտիկները հերոսաբար դիմադրում էին թշնամուն, ծանր կորուստներ պատճառում նրան և վիժեցնում դեպի Տուապսե շարժվելու նրա պլանը։ Վերջապես դիվիզիային հաջողվեց դուրս գալ շրջապատումից և հոկտեմբերի 26-ին կենտրոնանալ Սադովոդստվո, Պաուկ սար, Լյախի խուտոր շրջանում։ Փրկված էր դիվիզիայի դրոշը, անձնակազմի զգալի մասը, մարտական տեխնիկան։ Նոյեմբերի 5-ին շրջապատումից դուրս եկավ հերոսաբար մարտնչած 963-րդ հրետանային գնդի 3-րդ դիվիզիոնը։ Դիվիզիոնի հրամանատար, կապիտան Սուխրակովը պարգևատրվեց Կարմիր դրոշի, նրա քաղգծով տեղակալ, քաղղեկ Բադալյանը և մարտկոցի հրամանատարի քաղգծով տեղակալ, քաղղեկ Սահակյանը՝ Կարմիր աստղի շքանշաններով։ Դիվիզիոնի առավել աչքի ընկած 9 սպաներ ու զինվորներ պարգևատրվեցին «Արիության համար» և «Մարտական ծառայությունների համար» մեդալներով[44]։

1942 թ. հոկտեմբերի վերջերին—նոյեմբերի սկզբներին դիվիզիան առաջավոր գծից փոխադրվեց 18-րդ բանակի ռեզերվ՝ Տուապսե քաղաք, հանգստի և համալրման համար, որտեղ Անդրկովկասյան ռազմաճակատի Սևծովյան խմբավորման հրամանատարության հրամանով նոյեմբերի 22-ին դիվիզիան կազմացրվեց[45]։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին գոյություն ունեցած հայկական ազգային զորամիավորումներից միակը, որը չի կազմավորվել Հայաստանի տարածքում, 390-րդ հրաձգային դիվիզիան էր։ Այն ստեղծվեց Վրաստանի Մախարաձե, Փոթի և Զուգդիդի քաղաքներում՝ համաձայն ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեի 1941 թ. օգոստոսի 9-ի № 459 որոշման, որպես ոչ ազգային միավորում[46]։ Դիվիզիան մտնում էր Անդրկովկասյան ռազմաճակատի 46-րդ բանակի կազմի մեջ։ Նրա առաջին հրամանատարն էր գնդապետ Իվան Գրիգորևիչ Վինոգրադովը։ Դիվիզիայի կազմի մեջ մտնում էին 784-րդ, 789-րդ և 792-րդ հրաձգային, 954-րդ հրետանային գնդերը, 672-րդ սակրավոր և 842-րդ կապի առանձին գումարտակները, 453-րդ մոտոհրաձգային վաշտը և այլ ստորաբաժանումներ։ 1941 թ. նոյեմբերի 24-ին դիվիզիան փոխադրվեց Թամանյան թերակղզի, որտեղ մտավ Կերչից այստեղ նահանջած և մարտերում հյուծված 51-րդ բանակի մեջ։ Անդրկովկասյան ռազմաճակատի (1941 թ. դեկտեմբերի 30-ից՝ Կովկասյան ռազմաճակատ) հրամանատարությունը տենդորեն նախապատրաստվում էր իրագործել Կերչ-Թեոդոսյան դեսանտային գործողությունը, որի հիմնական նպատակը Ղրիմի ազատագրման համար պայմաններ ստեղծելն էր։ 51-րդ բանակը մտնում էր այդ ռազմաճակատի մեջ։ Մարտական գործողությունը սկսվեց 1941 թ. դեկտեմբերի 25-ին։ Կլիմայական բարդ պայմաններում 51-րդ և 44-րդ բանակների 6 դիվիզիա, 2 բրիգադ և 2 լեռնահրաձգային գունդ, Սևծովյան նավատորմի և Ազովի նավատորմիկի աջակցությամբ, դեսանտ իջեցվեցին թերակղզու հյուսիս-արևելյան ափերին և Թեոդոսիայի նավահանգստում։ Դեկտեմբերի 30-ին թշնամուց ազատագրվեցին Կերչ և Թեոդոսիա քաղաքները։ Մինչև 1942 թ. հունվարի 2-ը Կերչ թերակղզին ամբողջովին մաքրվեց թշնամուց։ Վերջինս ստիպված էր Սևաստոպոլը պաշարած իր զորքերի մի մասը նետել դեսանտայինների դեմ։ Ծայր առան արյունահեղ մարտեր, որոնց ակտիվորեն մասնակցեց նաև 390-րդ հրաձգային դիվիզիան։ Վերջինս թերակղզի փոխադրվեց 1941 թ. դեկտեմբերի 26—30-ին և մարտերի մեջ մտավ Բախչիելի գյուղի ուղղությամբ։ Մարտերի մեջ մտնելուց առաջ դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 11524 հոգուց, որից

---

44 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 408-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 2, գ. 41, թ. 48։

45 Նույն տեղում, ց. 1 գ. 1, թ. 2 (դիվիզիայի մի խումբ հրամանատարներ, քաղաշխատողներ և մարտիկներ համալրեցին Հայկական 89-րդ դիվիզիայի շարքերը)։

46 Նույն տեղում, ֆ. 390-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 4, թ. 1։

ռուսներ՝ 1429, ուկրաինացիներ՝ 2414, բելոռուսներ՝ 60, հայեր՝ 1894, վրացիներ՝ 3341, ադրբեջանցիներ՝ 1870, մնացածը՝ այլազգիներ[47]։

Մինչև 1942 թ. հունվարի 19-ը դիվիզիայի զորամասերը Կորպեչից արևմուտք ընկած Սեիդ-Հասան, Ակ-Մոնայ, Սեմիսոտկա բնագծում ետ էին մղում հակառակորդի կատաղի գրոհները։ Այնուհետև մինչև մարտի 5-ը նրանք պաշտպանվում էին հիշյալ բնագծում, միաժամանակ նախապատրաստվում հարձակման։

Հունվարի 28-ին Կովկասյան ռազմաճակատը նպատակահարմարությունից ելնելով բաժանվեց 2 ինքնուրույն՝ Ղրիմի և Անդրկովկասյան ռազմաճակատների։ 390-րդ հրաձգային դիվիզիան, 51-րդ բանակի կազմում, մտավ Ղրիմի ռազմաճակատի մեջ։ Ղրիմի ռազմաճակատի հրամանատար նշանակվեց գեներալ-լեյտենանտ Դիմիտրի Տիմոֆեևիչ Կոզլովը, շտաբի պետ՝ գեներալ-մայոր Ֆյոդոր Իվանովիչ Տոլբուխինը (հետագայում Խորհրդային Միության մարշալ)։ Ստուգելով Ակ-Մոնայի տեղանքում դիվիզիայի գրաված դիրքերը, նրանք շատ դժգոհ մնացին և 1942 թ. փետրվարի 28-ի [illegible] հրամանով պաշտոններից հեռացրեցին դիվիզիայի հրամանատար, գնդապետ Ռ. Գ. Կիսոգրադովին, կոմիսար, գումարտակային կոմիսար Սոկոլովին։ Հաջորդ օրը դիվիզիայի հրամանատարությունը ստանձնեց գնդապետ Սիսոն Գևորգի Հաքիյանը։ Հենց այդ ժամանակվանից էլ սկսվեցին դիվիզիայի վերակազմավորման աշխատանքները, որոնք ավարտվեցին մարտի կեսերին։ Վերակազմավորման հետևանքով միավորումը դարձավ ազգային և կոչվեց Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիա։ Նույն ժամանակաշրջանում վերակազմավորվեցին նաև Ղրիմի ռազմաճակատի 224-րդ և 396-րդ հրաձգային դիվիզիաները. նրանցից առաջինը՝ վրացական, երկրորդը՝ ադրբեջանական[48]։

Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան սկսեց համալրվել առավելապես հայազգի մարտիկներով ու սպաներով. նրա շարքերում ծառայող վրացի և ադրբեջանցի ռազմիկները համալրեցին 224-րդ և 396-րդ դիվիզիաները, իսկ այստեղից 390-րդ դիվիզիա եկան հայերը։ Դիվիզիան, ինչպես վերակազմավորման, այնպես էլ մարտերի ընթացքում, անշտապես գտնվում էր Հայաստանի կուսակցական և պետական մարմինների ուշադրության կենտրոնում։ Այն համալրվեց նաև Հայաստանից ուղարկված փորձված կադրերով, նրանց թվում ավելի վաղ՝ հունվարի վերջերին կերչ ժամանած 50 հայ քաղաշխատողներով, հայկական տպարանով՝ իրենց 6 աշխատակիցներով[50]։

1942 թ. մարտի 13-ից սկսեց հայերեն լույս տեսնել դիվիզիայի «Հայկական սնայպեր» թերթը, որի խմբագիրն էր ավագ քաղղեկ Գուրգեն Ներսեսի Հովհաննիսյանը՝ Գուրգեն Հովնանը (հետագայում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)։

Դիվիզիայի զինվորական կոմիսար նշանակվեց ավագ գումարտակային կոմիսար Թորգոմ Շահինյանը, քաղբաժնի պետ՝ ավագ գումարտակային կո-

---

47 Նույն տեղում, ֆ. 56, ց. 12214, գ. 982, թթ. 3—11, ֆ. 390-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 1, թ. 175։

48 Նույն տեղում, ֆ. Ղրիմի ռազմաճակատի, ց. 1188, գ. 3, թթ. 11—14։

49 Նույն տեղում, թթ. 153—154։

50 Նույն տեղում, ց. 1199, գ. 42, թ. 37։

միսար Սուրեն Հակոբի Թովմասյանը (հետագայում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար)։ Հրաձգային գնդերի հրամանատարներ նշանակվեցին՝ կապիտաններ Թորոսյանը (784-րդ գունդ), Լևոն Դեմոսի Հակոբյանը (792-րդ գունդ) և մայոր Մուշեղ Մելքոնի Մալխասյանը (789-րդ գունդ)։ Դիվիզիայի անձնակազմի 90 տոկոսը կազմում էին հայերը, մնացածը ռուսներ էին, ուկրաինացիներ, բելոռուսներ և այլն[51]։ Բայց քանի որ դիվիզիայի վերակազմավորման և համալրման աշխատանքները տեղի էին ունենում մարտական պայմաններում, որի ընթացքում կորուստներն անխուսափելի էին, իսկ Հայաստանից նոր համալրումներ ստանալը համարյա անհնարին էր։ Ուստի դիվիզիայի անձնակազմի ազգային տեսքը նույնպես փոփոխուն էր։ Այսպես, օրինակ, 1942 թ. ապրիլի 19-ի տվյալներով դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 9133 մարդուց, որից հայեր՝ 5744, ռուսներ՝ 1162, մնացածը՝ այլազգիներ[52]։

Մարտի 18-ին 51-րդ բանակի միավորումները վերսկսեցին հարձակումը։ Զգալի հաջողության հասավ 390-րդ հրաձգային դիվիզիան, որը 55-րդ տանկային բրիգադի աջակցությամբ, հաղթահարելով թշնամու դիմադրությունը, գրավեց նրա պաշտպանության գոտու առաջին երկու խրամատները և ամրապնդվեց այնտեղ։ Հավաքելով ուժերը, հակառակորդը հրետանային ուժեղ նախապատրաստությունից հետո, որն ուղեկցվում էր ավիացիայի զանգվածային հարվածներով և տանկային հզոր ուժերի աջակցությամբ, մարտի 20-ին անցավ հարձակման, նպատակ ունենալով ետ մղել իր պաշտպանության մեջ սեպված խորհրդային զորամասերին։ Կատաղի մարտերը շարունակվեցին մինչև օրվա վերջը և ավարտվեցին հակառակորդի 22-րդ տանկային դիվիզիայի ջախջախումով[53]։ Ֆաշիստական հրամանատարության մտադրությունը՝ ճեղքել 51-րդ բանակի պաշտպանությունը և դուրս գալ Կերչի ծովածոց, ավարտվեց անհաջողությամբ։ Այդ գործում իր արժանի ավանդը ներդրեց նաև Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան։

Այնուհետև դիվիզիան մասնակցեց նաև Կոյ-Հասանի ուղղությամբ մարտի 26-ին 51-րդ բանակի սկսած հարձակմանը։ Հատկապես աչքի ընկավ մայոր Մուշեղ Մալխասյանի գլխավորած 789-րդ հրաձգային գունդը, որը 5 տանկերի աջակցությամբ կարողացավ առաջ շարժվել 2 կմ և կրակի տակ վերցնել կարևոր երկաթուղային կամուրջը։ Սակայն, ընդհանուր առմամբ, բանակի միավորումներին չհաջողվեց գրավել հակառակորդի Կոյ-Հասան պաշտպանական հանգույցը և մարտի 31-ից անցան էշելոնացված պաշտպանության։ Սակայն հենց այդ օրն էլ մահացու վերք ստացավ դիվիզիայի հրամանատար, գնդապետ Ս. Գ. Զաքիյանը։ Ապրիլի 2-ի առավոտյան նա մահացավ ստացած վերքից։ Խորհրդային Հայաստանի կառավարության և Ղրիմի ռազմաճակատի հրամանատարության որոշմամբ գնդապետ Ս. Գ. Զաքիյանի աճյունը փոխադրվեց Երևան և թաղվեց մայրաքաղաքի Ս. Մ. Կիրովի անվան զբոսայգում։

---

51 Г. С. Абрамян Мощное оружие советских войск в боях за Крым (1941—1942). Ереван, 1975, с. 81.

52 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. Ղրիմի ռազմաճակատի, ց. 1199, գ. 3, թթ. 289—294։

53 С. М. Саркисьян. 51-я армия. М., 1983, с. 60—61.

1942 թ. ապրիլի 1-ին դիվիզիայի հրամանատարությունը ստանձնեց գնդապետ Իվան Իլյիչ Լյուդնիկովը, որը հետագայում աշքի ընկավ Ստալինգրադյան ճակատամարտում, արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման, վարեց կորպուսի, բանակի, ապա օկրուգի հրամանատարի պաշտոններ, ստացավ գեներալ-գնդապետի կոչում։

Ապրիլ ամսվա և մայիսի առաջին օրերի ընթացքում դիվիզիան գտնվում էր բանակի ռեզերվում և հակառակորդի հետ անմիջական շփում չունեցավ։ Այդ ժամանակամիջոցը դիվիզիայի հրամանատարությունն օգտագործեց անձնակազմը համալրելու, նորակոչիկներին վարժեցնելու, մարտական և քաղաքական պատրաստությունը բարձրացնելու համար։ Վաշտերում և գումարտակներում ստեղծվում էին տանկեր կործանողների խմբեր։ Մեծ ուշադրություն էր դարձվում Հայաստանի աշխատավորության հետ ունեցած կապերի ամրապնդմանը. այդ ընթացքում դիվիզիա այցելեց Հայաստանից ուղարկված երկու պատվիրակություն, առաջինը՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մացակ Պապյանի, երկրորդը՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի երկրորդ քարտուղար Աղասի Սարդայանի գլխավորությամբ։ Ապրիլի 17-ին գնդապետ Ի. Ի. Լյուդնիկովը նշանակվեց 138-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, իսկ նրան փոխարինեց գնդապետ Հմայակ Գրիգորի Բաբայանը[54]։

Մայիսի առաջին տասնօրյակին Ղրիմի ռազմաճակատի զորքերի դրությունը խիստ վատացավ. հակառակորդը նորանոր ուժեր կուտակելով, մայիսի 7-ին անցավ հարձակման։ Նրան հաջողվեց ռազմաճակատի ձախ թևում ճեղքել պաշտպանությունը և շարժվել թուրքական պատնեշի ուղղությամբ։ 51-րդ բանակի զորքերն արիաբար ետ էին մղում հակառակորդի ճակատային գրոհները և, միաժամանակ, միջոցներ փնտրում ձախ թևում առաջացած ճեղքվածքը փակելու համար։ Այդ նպատակով բանակի հրամանատարի հրամանով Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան Ագիրելի շրջանից տեղափոխվեց Արմա-Էլի։ Առաջինը նշված բնագիծ հասավ և մարտերի մեջ մտավ 789-րդ հրաձգային գունդը, որի անձնակազմի հերոսական ջանքերով հաջողվեց այդ տեղամասում կանգնեցնել հակառակորդի առաջխաղացումը։ Դա դիվիզիայի հիմնական ուժերին հնարավորություն տվեց կրակային դիրքեր գրավել հատկացված բնագծում։ Ճեղքվածքը փակելու նպատակով բանակի հրամանատարությունը փորձում էր այնտեղ կենտրոնացնել նաև այլ ուժեր։ Սակայն հակառակորդի ավիացիայի արտակարգ բարձր ակտիվության, ինչպես նաև ծանր հրետանու հզոր հարվածների հետևանքով այդ ուժերի մի զգալի մասը չկարողացավ կատարել մարտական առաջադրանքը ու կրեց ծանր կորուստներ։ Ռմբակոծության հետևանքով իր հրամանատարական կետում զոհվեց 51-րդ բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Վ. Ն. Լվովը և նրա հետ եղած մի շարք բարձրաստիճան հրամանատարներ։ Ծանր կորուստներ կրեց նաև 390-րդ դիվիզիան։ Ռմբակոծության ժամանակ, մայիսի 9-ին, Արմա-Էլի շրջանում զոհվեց դիվիզիայի կոմիսար Թորգոմ Շահինյանը, վիրավորվեց հրամանատարը՝ գնդապետ Հմայակ Բաբայանը. հրամա-

---

54 Հետագայում գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս, 338-րդ հրաձգային դիվիզիայի, ապա 35-րդ մեքենայացված բրիգադայի հրամանատար, զոհվել է 1945 թ. ապրիլի 22-ին Բեռլինի ճակատամարտում։

նատարին փոխարինեց դիվիզիայի հրետանու պետ, գնդապետ Բագրատ Լեվոնի Դանիելյանը, կոմիսարին՝ դիվիզիայի քաղբաժնի պետ, ավագ գումարտակային կոմիսար Սուրեն Հակորի Թովմասյանը, իսկ վերջինիս՝ ավագ գումարտակային կոմիսար Լիպարիտ Սերոբի Վարդանյանը։

Չնայած 51-րդ բանակի ռազմիկների հերոսական դիմադրությանը, նրանց չհաջողվեց կասեցնել հակառակորդի առաջխաղացումը։ Մինչև մայիսի 14-ը ֆաշիստական զորքերը Կերչից 3—4 կմ հարավ ընկած տեղամասում դուրս եկան նեղուցի ափերը և հիմնական ուժերից կտրեցին դեպի Էլտիգեն և Կամիշ-Բուրուն ետ քաշվող խորհրդային զորամասերից շատերին։ Ի վերջո մայիսի 14-ին հակառակորդին հաջողվեց հարավ-արևմուտքից ճեղքել խորհրդային զորքերի պաշտպանությունը և դուրս գալ Կերչի արվարձանները։ Դրությունը դարձավ անհուսալի, ուստի Հյուսիս-Կովկասյան ուղղության գլխավոր հրամանատար, Խորհրդային Միության մարշալ Ս. Մ. Բուդյոնին, Գերագույն գլխավոր հրամանատարության զորակայանի թույլտվությամբ, հրաման տվեց Ղրիմի ռազմաճակատի զորքերը Կերչի թերակղզուց դուրս բերելու մասին։ Մինչև 1942 թ. մայիսի 20-ը ռազմաճակատի զորքերը կազմակերպված ձևով ուրս բերվեցին Կերչից և կենտրոնացվեցին Թամանյան թերակղզում։ Զորքերն ծովով փոխադրումն ապահովող բազմաթիվ մարտիկներ, որոնց չհաջողվեց տեղափոխվել Թաման, մտան Հաջիմուշկայի քարհանքերը և պարտիզանական պայքար մղեցին։ Թամանյան թերակղզի փոխադրված զորքերի մեջ էր նաև Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան, որը չնայած հսկայական կորուստներին, պահպանել էր մարտական դրոշները։ Դիվիզիան կենտրոնացվեց Ստարոտիտարևսկայայի շրջանում, որտեղ համաձայն ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի 1942 թ. հունիսի 14-ի № 00124 հրամանի կազմացրվեց[55]։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին կազմավորված հայկական ազգային զորամիավորումներից միայն մեկն էր, որ չմասնակցեց մարտական գործողություններին։ Այդ միավորումը 261-րդ հրաձգային դիվիզիան էր, որը կազմավորվել է Երևանում՝ Անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատարության 1942 թ. հոկտեմբերի 8-ի հրամանի համաձայն։ Ռազմաճակատի հրամանատարի նույն թվականի հոկտեմբերի 17-ի հրամանի համաձայն դիվիզիան ստացավ հայկական անվանումը[56]։ Դիվիզիան մտնում էր նույն ռազմաճակատի 45-րդ բանակի կազմի մեջ։ Դիվիզիայի առաջին հրամանատար նշանակվեց գեներալ-մայոր Վասիլի Տիմոֆեևիչ Մասլովը, որին հետագայում փոխարինեցին գնդապետներ Բագրատ Սարգսի Միտոյանը, ապա Ներսես Պարսիի Բայոյանը։ Դիվիզիայի կոմիսարն էր՝ ավագ գումարտակային կոմիսար Արամ Քանանովը, քաղբաժնի պետը՝ Լևոն Շահբազյանը։ Դիվիզիայի կազմի մեջ մտնում էին՝ 974-րդ, 976-րդ և 978-րդ հրաձգային, 809-րդ հրետանային գնդերը, 550-րդ սակրավոր, 628-րդ կապի և 331-րդ բժշկասանիտարական առանձին գումարտակները, 714-րդ ավտոմատ. առանձին. ականանետային դիվիզիոնը, շտաբային մարտկոցը, առանձին հետախուզական և քիմիական պաշտպանության վաշտերը և այլն[57]։ 1941 թ. դեկտեմբերի տվյալներով դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 8981 մարդուց, որից հայեր՝ 6632, ռուսներ՝ 1339, ուկրաինացիներ՝ 567, այլազգիներ՝ 443 մարդ[58]։ Հայերը կազմում էին անձնակազմի 73,8 տոկոսը։ Այս կազմը, աննշան փոփոխություններով, պահպանվեց մինչև պատերազմի վերջը։ Դիվիզիայի հիմնական խնդիրն էր՝ պաշտպանել ԽՍՀՄ պետական սահմանները և ռազմաճակատի համար երթային գումարտակներ պատ-

---

55 ՌԴ ՊՆՆԱ, նշված Տեղեկագիրքը, գույքային № 6393, էջ 699։

56 Նույն տեղում, ֆ. Անդրկովկասյան ռազմաճակատի, ց. 990, գ. 2, թ. 175։

57 Նույն տեղում, ֆ. 261-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 1, թթ. 1—3։

58 Նույն տեղում, ֆ. 56, ց. 12214, գ. 877, թ. 5։

բաստել և ուղարկել։ Մինչև իր կազմացրումը (հունիս 1945 թ.)[59], դիվիզիան պատվով կատարեց իր առջև դրված խնդիրը։ Նրա շարքերում մարտական պատրաստություն ստացած ավելի քան 10 000 հայ ռազմիկներ մեկնեցին ռազմաճակատ և իրենց արժանի ավանդը ներդրեցին ֆաշիզմի ջախջախման գործում։

Ավելորդ չենք համարում նշել նաև, որ ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում նշանակալից էր նաև Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը։ Պատերազմի տարիներին թիկունքի աշխատողների հերոսական ջանքերի շնորհիվ հանրապետությունը վեր էր ածվել իսկական զինանոցի, որը ռազմաճակատին մատակարարում էր շուրջ 300 տեսակի զենք ու զինամթերք, պարեն ու հագուստ։ Աշխատավորների խնայողությունների հաշվին կազմավորվեցին «Հայաստանի երիտասարդություն», «Հայաստանի գյուղացիություն», «Զանգեզուրի հանքագործ» տանկային շարասյուները, «Խորհրդային Հայաստան», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» ավիաէսկադրիլիաները և այլն։

Պատերազմում տարած հաղթանակում զգալի ներդրում ունեցավ նաև սփյուռքահայությունը, որի ճնշող մեծամասնությունը կողմնորոշվեց դեպի մայր հայրենիքը և համախմբվեց ազգային ճակատի կազմակերպություններում, պաշտպանեց, նյութական ու բարոյական օժանդակություն ցույց տվեց մարտնչող Խորհրդային հայրենիքին։ 1944 թ. փետրվարին Առաջին Մերձբալթյան ռազմաճակատի (հրամանատար Հ. Ք. Բաղրամյան) 119-րդ առանձին տանկային գնդի կազմում մարտերի մեջ մտավ սփյուռքահայերի հանգանակությամբ կառուցված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը։ Իրանահայերը միջոցներ հավաքեցին «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյան համար։ Հազարավոր սփյուռքահայեր ֆաշիզմի դեմ պայքարել են նաև զենքը ձեռքներին։ Միայն ԱՄՆ-ի բանակում մարտնչել են շուրջ 20 հազար հայորդիներ։ Ավելի քան 30 հազար հայ ռազմիկներ կային դաշնակից մյուս երկրների բանակներում, որոնք զորակոչվել էին Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից և այլ վայրերից։ Հազարավոր հայեր ընդգրկված էին Ֆրանսիայի, Հունաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Չեխոսլովակիայի, Հոլանդիայի և ֆաշիստական Գերմանիայի եղողից զավթված մի շարք այլ եվրոպական երկրների դիմադրական-պարտիզանական շարժման պայքարում և իրենց արժանի ավանդը ներդրեցին աշխարհի առաջադեմ մարդկության ոխերիմ թշնամի ֆաշիզմի դեմ տարած պատմական նշանակություն ունեցող հաղթանակի գործում։

УЧАСТИЕ АРМЯНСКИХ НАЦИОНАЛЬНЫХ ВОИНСКИХ ФОРМИРОВАНИЙ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941—1945 гг.)

Доктор ист. наук К. А. АРУТЮНЯН

Резюме

Армянский народ принял активное участие в Великой Отечественной войне Советского Союза. Более 500 тысяч его сыновей и дочерей с честью выполнили свой долг перед Родиной, внесли достойный вклад в победу над фашизмом. Свыше 200 тысяч воинов-армян погибло на фронте, 70 тысяч были награждены боевыми орденами и медалями. 100 армян и представителей других народов, живущих в Армении, получили звание Героя Советского Союза, а Маршал Советского Союза И. Х. Баграм-

59 Նույն տեղում, նշված Տեղեկագիրքը, գույքային № 6398, էջ 430։

мян и прославленный летчик Н. Г. Степанян были удостоены этого высокого звания дважды. 27 воинов-армян стали полными кавалерами ордена Славы всех трех степеней. Высокое полководческое звание Маршала Советского Союза было присвоено И. Х. Баграмяну, Адмирала флота Советского Союза—И. С. Исакову. В годы войны существовало 6 армянских дивизий: 76-я, 89-я, 261-я, 390-я, 408-я и 409-я. 76-я горно-стрелковая дивизия, сформированная в Армении в 1920—1922 гг. на базе Армянской армии первой Республики Армении, в годы войны участвовала в Сталинградском сражении, в битве на Курской дуге, в боях за освобождение Белоруссии и Прибалтики, была преобразована в 51-ю Витебскую гвардейскую ордена Ленина дивизию. 89-я стрелковая дивизия, сформированная в Ереване в конце 1941 г., в августе 1942 г. была направлена на фронт. Участвовала в боях за Северный Кавказ, за освобождение Таманского, Керченского и Крымского полуостровов, Польши, за взятие Берлина. Получила почетное наименование Таманской, награждена орденами Красной Звезды, Красного Знамени и Кутузова 2-й степени. 261-я стрелковая дивизия стояла на защите южных рубежей СССР на территории Советской Армении. 390-я стрелковая дивизия в январе—мае 1941 г. отличилась в тяжелых боях в Керчи, 408-я стрелковая дивизия с августа 1941 г. стояла на левом берегу р. Аракс на территории Армении. В сентябре 1942 г. была направлена на фронт, где участвовала в кровопролитных сражениях за Кавказ на участке Туапсе-Новороссийск-Геленджик. 409-я стрелковая дивизия сражалась на Северном Кавказе, за освобождение Украины, Молдавии, Румынии, Венгрии, Австрии и Чехословакии, получила почетное наименование Кировоградско-Братиславской, награждена орденом Богдана Хмельницкого 2-й степени.